

«Մ Ի Մ Ա Չ»  
Փակ Բաժնետիրական Ընկերության

---

Սիլիցիումի երկօքսիդի արտադրության

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ

Կատարող՝ «Քոնսեկոարդ» ՍՊԸ

Տնօրեն՝

Վ.Թևոսյան



Երևան - 2020

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	3
1.1. Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկություններ.....	3
1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը .....	3
1.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) .....	3
2. ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ .....	7
2.1. Ֆիզիկաաշխարհագրական և երկրաբանական պայմանները.....	7
2.2 Կլիման .....	7
2.3. Օդային ավազան.....	9
2.4. Ջրային ռեսուրսներ .....	10
2.5. Հողային ռեսուրսներ .....	10
2.6. Սոցիալ-տնտեսական պայմանները .....	11
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	12
3.1. Ռիսկերի գնահատում .....	12
3.2. Արտանետումների աղբյուրները.....	13
3.3. Ջրօգտագործում և ջրահեռացում.....	13
3.4. Սոցիալական ռիսկերը.....	13
3.5. Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն .....	14
3.5.1. Մթնոլորտային օդ.....	14
3.5.2. Ջրային ռեսուրսներ.....	14
3.5.3. Կենսաբազմազանություն.....	14
3.5.4. Սոցիալական խնդիրներ .....	14
3.5.5. Փոխհատուցում.....	15

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1. Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկություններ

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Միմագ» փակ բաժնետիրական ընկերությունը: Ընկերությունը մասնագիտացված է արտադրական տեխնոլոգիաների ասպարեզում:

Ընկերությունը, գրանցված ք. Երևան, Եղ.Թադևոսյան 72.,բն.10

Նախատեսվող գործունեության հասցեն՝ ք. Երևան, Աջափնյակ, Միլիկյան թաղամաս, 10 փողոց, 85 կաթսայատուն:

## 1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Նախատեսվող գործունեության անվանումն է.

“Միլիցիումի երկօքսիդի արտադրություն”:

Նախատեսվող գործունեության նպատակն է կազմակերպել տեղական օգտակար հանածոների՝ այդ թվում սիլիցիումի օքսիդի և կալցիումի կարբոնատ պարունակող հանքային նյութերի վերամշակում և արտադրել գերմաքուր սիլիցիումի երկօքսիդ, որն ունի լայն կիրառություն տնտեսության տարբեր ճյուղերում, հիմնականում՝ քիմիական և լվացող նյութերի արդյունաբերության:

## 1.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

Գործունեությունը նախատեսվում է կազմակերպել Միլիկյան թաղամասի 10 փողոց հասցեում, նախկին կաթսայատան տարածքում:

- Կադաստրային ծածկագիր՝ 01-011-0610-0007
- Ընդհանուր մակերես՝ 4140 մ<sup>2</sup>,
- Շինություն՝ 983 մ<sup>2</sup>,
- Գործարնական նշանակություն՝ - արտադրական
- Կարգավիճակ՝ - սեփականություն: Տարածքի սեփականատերն է քաղաքացի Տիգրան Գրիգորյանը /սեփականության վկայականի պատճենը կցվում է/:

Գործունեության նախապատրաստման փուլում նախատեսվում է սեփականատիրոջ հետ կնքել վարձակալական պայմանագիր՝ 6 ամիս ժամկետով, իսկ բոլոր անհրաժեշտ թույլտվությունների ձեռքբերումից հետո, նախատեսվում է գնել տարածքը:

Ներկայում տարածքում առկա է քարամշակման արտադրամաս, որը չի գործում և կապամոնտաժվի վարձակալական պայմանագրի ստորագրումից հետո:

Տարածքի մոտակայքում գործում են բետոնահանգույց և տարբեր պահեստային շինություններ:

Ներկա պայմաններում տարածքի ջրամատակարարումը իրականացվում է Վեոլիա ջուր ընկերության քաղաքային ջրամատակարարման ցանցից, հոսանքի մատակարարումը՝ ՀԷՑ ՓԲԸ ցանցից: Տարածքում կոյուղու ցանց չկա և արտահոսքերը հավաքվում են կեղտաջրերի հավաքման հորում ու պարբերաբար տեղափոխվում քաղաքային կոյուղու համակարգ:

Ներկայացվող գործունեության նախապատրաստման փուլում նախատեսվում է օգտվել առկա ենթակառուցվածքներից: Տարածքը գնելուց հետո նախատեսվում է պայմանագրեր կնքել Վեոլիա ջուր և ՀԷՑ ընկերությունների հետ ջրի ու հոսանքի մատակարարման /անվանափոխության/ համար: Նախատեսվում է նաև հայտ ներկայացնել քաղաքապետարան՝ մինչև քաղաքային կոյուղու ցանց խողովակ կառուցելու համար, որով ընկերության կենցաղային կեղտաջրերը կուղղվեն քաղաքային կոյուղու համակարգ:

Գազի պահանջարկ չի լինելու և ջերմային պրոցեսները, ինչպես նաև շենքերի ջեռուցումը նախատեսվում է իրականացնել էլեկտրական եղանակով:

Կազմակերպվելու է 6000 տ/տարի արտադրողականությամբ 4N և ավելի մաքրության սիլիցիումի երկօքսիդի արտադրություն: Հումքը՝ 95% -անոց մաքրությամբ Վայքից բերված սպիտակ ավազի փոշին է, իսկ օգտագործվող քիմիական ռեագենտները՝ աղաթթուն և կաուստիկ սոդան, նախատեսվում է արտադրել տեղում՝ հիմնված Ավանի աղի հումքի վրա:

Տեխնոլոգիական լուծումները հետևյալն են՝

a. NaCl-ի ջրային լուծույթից էլեկտրամեմբրանային եղանակով ստանում ենք NaOH և HCl: Այս գործընթացը կատարվում է փակ ցիկլով մթնոլորտային ճնշման տակ:

b. Հաշվարկված համամասնությամբ ստացված NaOH-ի ջրային լուծույթի և ավազափոշու խառնուրդից կավիտացիայի միջոցով ստանում ենք հեղուկ ապակու ( $\text{Na}_2\text{SiO}_3$ ) ջրային լուծույթ:

c. Հեղուկ ապակու ջրային լուծույթը ֆիլտրվում է մեխանիկական ֆիլտրով, այնուհետև ուլտրաֆիլտրով և էլեկտրադիալիզարարի միջոցով լուծույթից հեռացվում է երկաթի հիդրօքսիդը:

d. Երկաթից զերծ լուծույթի պարունակությունը նստեցման բաքում մեր ստացած HCl-ի ջրային լուծույթով նստեցվում է և ֆիլտրվում պրես ֆիլտրի միջոցով:

e. Ստացված NaCl-ի ջրային լուծույթը կրկնակի օգտագործման հումք է NaOH և HCl ստանալու համար, իսկ նստվածքի՝ SiO<sub>2</sub>-ի վրա ավելացվում է մաքուր ջուր և մեմբրանային էլեկտրալիզարարի միջոցով ձերբագատվում ենք խառնուրդային իոններին:

f. Մաքրված՝ SiO<sub>2</sub>-ը չորացվում է և փաթեթավորվում:

Արտադրական հիմնական ցիկլում արտադրական թափոնը կկազմի հիմնական հումքի՝ ազազի մոտավորապես 5%:

Հետագայում կքննարկվի նաև ստացված պինդ թափոնի (հիմնականում երկաթի հիդրօքսիդի) օգտահանման հարցը:

#### *Օգտագործվող նյութերը և բնառեսուրսները*

- Արտադրական նպատակների համար ջուր՝ հումքի լվացման, լուծույթների պատրաստման և հովացման համակարգերի համար: Հաշվի առնելով կրկնակի օգտագործման հնարավորությունը, արտադրական ջրապահանջը կլինի փոքրածավալ և կօգտագործվի ջուր Վեոլիա ջուր ընկերության ցանցից:

- Ջուր՝ անձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

- Քարաղ՝ ռեազենտներ ստանալու համար:

Օգտագործվող նյութերի և բնառեսուրսների ստույգ քանակները կներկայացվեն հիմնական փորձաքննության փուլում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ կազմում:

Ստորև նկար 1-ում բերված է արտադրական գործընթացների տեխնոլոգիական սխեման:



## 2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

### 2.1. Ֆիզիկաաշխարհագրական և երկրաբանական պայմանները

Նախատեսվող շինարարությունը իրականացվելու է Երևան քաղաքի հյուսիս-արևմտյան մասում՝ Միլիկյան թաղամասի ոչ բնակելի գոտում:

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Ընդհանուր առմամբ Երևանի տարածքում գեոմորֆոլոգիական պայմանները բավական բարդ են: Ռելիեֆի հիմնական տարրերն են Կոտայքի և Ջրվեժ-Ջրվեժի հրաբխային սարավանդների լանջերը, ինչպես նաև Գետառ գետի կիրճի զառիթափ լանջերը: Տարածքին բնորոշ են նաև առանձին հողմահարման էրոզիոն լանջերը, տափարակները, հարթ տարածքները, ողողահունները, ձորակները:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Ըստ ձևաբանական առանձնահատկությունների տարածքը հանդիսանում է սարավանդի մի մասը՝ քաղաքի ամենաբարձր հատվածներից մեկն, որի մակերևույթը թեք աստիճանաձև է: Մարավանդը երեք կողմից ուղղաձիգ և մեծ թեքության լանջերով իջնում է դեպի հարևան իջվածքները:

#### *Տարածքի սեյսմատեկտոնական պայմանները*

Տարածքի սեյսմատեկտոնական պայմանները բարդ են: Սպառվող առավելագույն հորիզոնական արագացումները գտնվում են 0.25-0.45 g սահմաններում (8.25-9 և ավելի բալ), ընդ որում տարածքի գերակշռող մասի գրունտների արագացումները տատանվում են 0.3-0.35 g սահմաններում:

### 2.2 Կլիման

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները:

Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժմամբ:

Առանց սառնամանիքների ժամանակաշրջանը կազմում է 213 օր, առանձին տարիներին տատանվելով 163-ից մինչև 234 օր: Օդի միջին ջերմաստիճանն ըստ բարձրության տատանվում է 11.5–12°C: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը դիտվել է հունվարին՝ մինուս 30 °C, բացարձակ առավելագույնը՝ հուլիս-օգոստոս ամիսներին՝ + 42 °C:

Երևանի կլիման աչքի է ընկնում չորայնությամբ: Գարնան ամիսներին (մարտ – մայիս) դիտվում են մինչև 150 մմ տեղումներ, հունիս – սեպտեմբեր ամիսները խիստ չորային են՝ մինչև 64 մմ: Տեղումների տարեկան քանակը տատանվում է 286 մինչև 353 մմ:

Ամռանն օդի հարաբերական խոնավությունը կազմում է 49% – 53%, ձմռանը՝ 73% – 76%, գարնանը՝ 57% – 61% և աշնանը՝ 51% – 70%:

Տարածքի համար բնորոշ քամու ուղղությունը հյուսիս-արևելյան է: Ձմռան ամիսներին հաճախակի դիտվում են հանդարտ և թույլ քամիներով եղանակներ, ինչը ռելիեֆի գոգավորության պայմաններում նպաստում է սառը օդի լճացմանը: Հունվար ամսին հանդարտ օրերի թիվը կարող է կազմել 45% – 75%:

Երևանի տարածաշրջամի օդերևութաբանական հիմնական պարամետրերը տրված են ստորև:

Աղյուսակ 2.1. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները, C

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջինտարեկան, °C
-4.0	-1.3	5.4	11.8	17.0	21.1	25.1	24.9	20.1	13.6	6.2	-0.9	11.6



Աղյուսակ 2.2. Օդի միջին նվազագույն ամսական և տարեկան ջերմաստիճանները, C

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջինտարեկան, °C
-7.9	-5.7	-0.3	5.6	10.1	13.5	17.3	16.9	12.2	7.0	1.4	-4.4	5.5

Աղյուսակ 2.3. Օդի միջին առավելագույն ամսական և տարեկան ջերմաստիճանները, C

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջինտարեկան, °C
0.7	3.8	11.3	18.5	24.0	28.6	32.5	32.4	28.0	21.0	12.3	3.9	18.1

Տարածքին բնորոշ են լեռնահովտային քամիները, որոնք հատկապես արտահայտված են ամռանը: Քամու գերակայող ուղղությունը հյուսիս-արևելյանն է: Ձմռան ամիսներին հաճախակի են թույլ քամիներով եղանակները:

Աղյուսակ 2.4. Քամիների միջին ամսական արագությունը, մմ

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
0.8	1.3	1.7	1.9	1.8	2.3	2.9	2.4	1.6	1.0	0.8	0.6

### 2.3. Օդային ավազան

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (Էկոմոնիթորինգ) կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում Էկոմոնիթորինգի կողմից մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 16 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 211 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝

ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, փոշու և գետնամերձ օդոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման:

Ըստ Էկոմոնիթորինգի պաշտոնական կայքում առկա տեղեկատվության մայիսի 18-ից 31-ն ընկած ժամանակահատվածում, մայիսի 1-ից 17-ի համեմատությամբ, Երևան քաղաքում փոշու պարունակությունը աճել է մոտ 3%-ով:

Մայիսի 18-ից 31-ն ընկած ժամանակահատվածում, մայիսի 1-ից 17-ի համեմատությամբ, Երևանում ազոտի երկօքսիդի պարունակությունը աճել է մոտ 3%-ով:

Մայիսի 18-ից 31-ն ընկած ժամանակահատվածում, մայիսի 1-ից 17-ի համեմատությամբ, ծծմբի երկօքսիդի պարունակությունը Երևան քաղաքում աճել է մոտ 27%-ով:

Միևնույն ժամանակ բոլոր նշված նյութերի մոնիթորինգի արդյունքում ՍԹԿ գերազանցումներ չեն գրանցվել:

## **2.4. Ջրային ռեսուրսներ**

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է Էկոմոնիթորինգի կողմից:

Երևանի տարածքում հիմնական ջրային ռեսուրս է հանդիսանում Հրազդան գետը իր Գետառ վտակով և Երևանյան լիճը:

Ըստ Էկոմոնիթորինգի պաշտոնական կայքում առկա տեղեկատվության Երևանյան լճի ջրի որակը 2020 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Հրազդան գետի ջրի որակը, առաջին եռամսյակի արդյունքներով, Արզնի ՀԷԿ-ից ներքև և Երևան քաղաքից ներքև գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Նախատեսվող գործունեության տարածքի հեռավորությունը Հրազդան գետի մոտակա հատվածից կազմում է 3.5 կմ:

## **2.5. Հողային ռեսուրսներ**

Դիտարկվող տարածքում հողերի ձևավորման պրոցեսն ընթանում է հրաբխային ապարների՝ բազալտների, տուֆերի, հողմահարման նյութերի վրա: Նրանց վրա ձևավորվում են բաց գորշագույն հողեր: Հողերը հիմնականում ունեն կավավազային կամ ավազակավային մեխանիկական կազմ:

Չոր կլիման և աղքատ բուսական ծածկը պայմանավորում են հողային պրոֆիլի բաժանվածությունը հորիզոնների և օրգանական նյութերով թույլ հագեցվածությունը: Նույնիսկ հողի ամենավերին հորիզոններում թույլ հիմնային ռեակցիայի պայմաններում հումուսի քանակը այդպիսի հողերում 1 %-ից չի անցնում:

Ամռանը հողի մակերևույթը սովորաբար տաքանում է մինչև 50°C, իսկ առանձին դեպքերում՝ մինչև 54°C: Ձմռանը սառչում է միջին հաշվով 2-3 սմ խորությամբ, առանձին տարիներին կարող է սառել մինչև 35սմ: Ամռանը հողն ուժեղ չորանում է և ճաքճքում: Այսպիսի պայմաններում բույսերի աճեցնելն առանց արհեստական ոռոգման գործնականորեն անհնար է:

Համաձայն Երևանի գլխավոր հատակագծի, քաղաքի տարածքը աղտոտված է ծանր մետաղներով և մասամբ՝ ռադիոնուկլիդներով: Ըստ ծանր մետաղներով աղտոտվածության, քաղաքի տարածքը ներկայումս վերագրվում է միջին աղտոտվածության տարածքներին: Մակայն քաղաքի տարածքում առանձնանում են նաև ուժեղ աղտոտված տարածքներ:

Անմիջապես նախատեսվող տարածքը ամբողջությամբ բետոնապատ կամ ասֆալտապատ է և հողային բաց շերտ չկա:

## **2.6. Սոցիալ-տնտեսական պայմանները**

Ներկայացվող գործունեության ազդակիր համայնք է հանդիսանում Երևան քաղաքը:

Երևանի<sup>1</sup> տարածքը կազմում է 223 քկմ, բնակչությունը՝ 1075.1 հազ. մարդ:

Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիսարևելյան մասում, Հրազդան գետի երկու ափերին՝ ծովի մակերևույթից 900-1200 մետր բարձրության վրա:

Քաղաքի կլիման խիստ ցամաքային է՝ շոգ ու չոր ամառ և համեմատաբար խստաշունչ ձմեռ:

Երևանը վարչական սահմանով հարում է Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին:

Երևանը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն:

---

<sup>1</sup> Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

Երևանում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Միլիկյան թաղամասը գտնվում է Երևանք քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի սահմաններում:

Աջափնյակ վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Արաբկիր, Դավթաշեն, Կենտրոն, Մալաթիա-Մերաստիա վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին:

Տարածքը՝ կազմում է 2582 հա

Բնակչությունը՝ 109 600 մարդ:

### 3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

#### 3.1. Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- Մանրեցված ավազափոշու տեղափոխման աշխատանքների հետ,

- Միլիցիումի օբսիդի քիմիական մշակման հետ:

Գործունեությունը իրականացվելու է գոյություն ունեցող շինություններում և օգտագործվելու են գոյություն ունեցող ենթակառուցվածները: Կիրականացվեն որոշ նախապատրաստական և նորոգման աշխատանքներ, կապիտալ շինարարություն չի նախատեսվում:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

### **3.2. Արտանետումների աղբյուրները**

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ:

Նախատեսվող աշխատանքների ընթացքում կառաջանան հետևյալ վնասակար նյութերի արտանետումները.

- չդիֆերենցված մասնիկներ /փոշի/՝ հումքի ապարատների մեջ բեռնման ընթացքում,

- ռեագենտների կիրառման պարագայում, դրանց գոլորշիները:

### **3.3. Զրոգտագործում և ջրահեռացում**

Գործարանի շահագործման ընթացքում ջուրը կօգտագործվի Վեոլիա ջուր ընկերության ցանցից, գոյություն ունեցող միացումների միջոցով: Կենցաղային կոյուղաջրերը կմիանան գործող կոյուղու ներքին ցանցին, որը իր հերթին միացած է կեղտաջրերի հավաքման հորին:

Արտադրական արտահոսք չի նախատեսվում, քանի որ իրականացվելու է արտադրական արտահոսքի մաքրում և վերադարձ կրկնակի օգտագործման:

### **3.4. Սոցիալական ռիսկերը**

Գործարանը գտնվում է արտադրական գոտում, բնակելի թաղամասերից զգալի հեռավորության վրա և շահագործումը չի ունենա շոշափելի ազդեցություն բնակչության առողջության կամ կենսակերպի վրա:

Հաշվի առնելով նաև բեռնատեղափոխումների փոքր ծավալները, երթևեկության վրա ազդեցությունը կլինի ոչ էական:

### **3.5. Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն**

Սույն ենթաբաժնում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները, ըստ ազդեցության ուղղությունների:

#### **3.5.1. Մթնոլորտային օդ**

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- հանքային նյութերի տեղափոխումը իրականացվելու է պարկերով
- հանքային նյութերի պահեստը նախատեսված է փակ շինության մեջ,
- սիլիցիումի օքսիդի քիմիական մշակման հանգույցը համալրված կլինի օդափոխության համակարգով:

#### **3.5.2. Ջրային ռեսուրսներ**

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- Հովացման գործընթացը իրականացվելու է փակ՝ շրջանառու համակարգի միջոցով: Համակարգը իրենից ներկայացնում է ջրի կուտակման բաք, պոմպ խողովակաշար և ապարատների հովացման շապիկներ:
- Արտադրական արտահոսքը մաքրվելու տեղային մաքրման կայանում և մաքրված ջրերը վերադարձվելու են կրկնակի օգտագործման: Մաքրման համակարգը բաղկացած է ուղղանկյուն պարզարանից, որի միջնամասում հնարավոր է տեղադրել գտիչներ:

Ներկայացված լուծումները նախնական են և հիմնական փուլում հնարավոր են որոշ շտկումներ: Շրջանառու համակարգի և մաքրման հանգույցի մանրամասն սխեման կներկայացվի ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում:

Վթարային դեպքերի և հակահրդեհային իրավիճակների համար նախատեսված են ջրի պահեստային տարողություններ:

#### **3.5.3. Կենսաբազմազանություն**

Տարածքը գտնվում է նախկին արտադրական գոտում՝ կաթսայատան տարածքում, որտեղ չկան վայրի կենդանիների ապրելավայրեր և բնական բուսականություն:

#### **3.5.4. Սոցիալական խնդիրներ**

Ինչպես վերը նշվել է գործարանի շահագործումը չի առաջացնի խնդիրներ մոտակա բնակելի թաղամասերի համար:

Միննույն ժամանակ գործարանի մեկնարկը թույլ կտա ստեղծել նոր աշխատատեղեր, դրանով լուծելով մի քանի տասնյակ ընտանիքների սոցիալական խնդիրները:

### ***3.5.5. Փոխհատուցում***

Նախատեսվող բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Նախատեսվում կանաչապատել արտադրական տարածքի ազատ մասերը, մասնավորապես, եզրային մասերում իրականացնել ծառատունկ, իսկ միջնամասում տեղադրել սիզամարգ:

Բնապահպանական միջոցառումների մանրամասն նկարագրությունը, կատարողների ցանկը և ծախսային ցուցանիշները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվության կազմում:

Ստորև բերված են տարբեր չափի իրադրային սխեմաները:



Իրադրային սխեմա 1





Իրադրային սխեմա 2



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԿԱՅԱԿԱՆ**

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ**

Սույն վկայականով հաստատվում է «14» Փետրվարի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒՔՅԵԿՏ (ՆԵՐ)

ԳՐԻԳՈՐ ԱՍԻՐԻԱՆՅԱՆ ՍԱՍԿԵԼԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏԼՎԵԼՈՒ ԿԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Աջափնյակ Սիլիկյան թաղամաս 10-րդ փողոց 85 կաթնայատուն

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՍԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Նվիրատվության պայմանագիր 09.02.2018թ. թիվ 1753

4. ՀՈՂԱՍԱՐԻ ԲՆՈՒՄԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-001-0610-0007

Մակերեսի չափը (հա)՝ 0,414


Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ նշանակությունը՝ Արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության.

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# ՀՈՂԱՍԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

1:1000  
(մասշտաբը)



Հարկման համար	Շրջանառության շափր (ՅՅր)	Անհատական հարկման նիշ
1-2	35.0	հողմուս
2-3	1.5	— " —
3-4	10.5	— " —
4-5	1.3	— " —
5-6	29.0	— " —
6-7	25.9	— " —
7-8	74.5	— " —
8-1	25.5	ճահիլապահ

Շրջանառության №	Շրջանառության անվանում
1	Քոնկրետային փայտ
2	Զուր հոֆանդ (գրանջան)
3	Գարխույ



Կատարող *Մ. Արթուրյան*  
(ստորագրությունը)  
*Մ. Մանուկյան*

# ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

1:200  
(մասշտաբը)

1) Շփուշ  
H=2.8    h=2.6

1) Ի կայք  
H=8.0    h=7.5



Կատարող Ս. Ա. Արարատյան  
(ստորագրությունը)  
Հ. Զ. Զեյնաբյան